ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

« » 20 թվականի **թիվ** քաղ.

«Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 033/2013) գործողության մեջ դնելու կարգի մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3–րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը **որոշեց**.

1. Սահմանել, որ՝

ա) Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 033/2013)

տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի առնչությամբ (այսուհետ, համապատասխանաբար՝ անդամ պետություն, արտադրանք, տեխնիկական կանոնակարգ), մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը, վավեր են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ուշ, քան 2015 թվականի նոյեմբերի 1–ը:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող նորմատիվ իրավական ակտերով ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի տրամադրումը կամ ընդունումը չի թույլատրվում.

բ) մինչեւ 2015 թվականի նոյեմբերի 15-ը թույլատրվում է արտադրանքի արտադրությունը եւ Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը՝ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող նորմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան, նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը:

Արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում՝ շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Այդ արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում.

գ) սույն կետի «ա» ենթակետում նշված համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետի

ընթացքում Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրված արտադրանքի, ինչպես նաեւ սույն կետի «բ» ենթակետում նշված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված պիտանիության ժամկետի ընթացքում.

դ) մինչեւ 2015 թվականի մայիսի 1-ը թույլատրվում է այն արտադրանքի արտադրությունն ու Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը, որը, մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը, ենթակա չի եղել Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող նորմատիվ իրավական ակտերով կամ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման)՝ առանց արտադրանքի համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի եւ առանց համապատասխանության ազգային նշանով (շուկայում՝ շրջանառության նշանով) մակնշման:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգման հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Վ. Ն. Կորեշկովին՝ անդամ պետությունների հետ համատեղ նախապատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծը, եւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եռամսյա ժամկետում ապահովել դրա՝ սահմանված կարգով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նիստի քննարկմանը ներկայացնելը:

3. Անդամ պետություններին՝

ա) մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը՝ սահմանել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար պատասխանատու պետական հսկողության (վերահսկողության) մարմիններին, եւ դրա մասին

տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային.

բ) Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ապահովել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ հաշվի առնելով սույն Որոշման 1–ին կետը:

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ **Վ. Խրիստենկո**